

Ն Ե Ր Ս Ը

(Intérieur)

ՄՕՐԻՍ ՄԷՏԵՐԼԻԿԿԻ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Պ Ա Ր Տ Ի Զ Ո Ւ Մ

ԾԵՐՈՒՆԻՆ
ՕՏԱՐԱԿԱՆԸ
ՄԱՐԻՍՄ
և
ՄԱՐԹԱ
ՄԻ ԳԻՒՂԱՑԻ
ԱՄՔՈՒՅ

Ծերունու թողները.

Տ Ա Ն Մ Է Զ

ՀԱՅՐԸ
ՄԱՅՐԸ
ԵՐԿՈՒ ԱՂՋԻԿՆԵՐԸ
ԵՐԵԽԱՆ

Անխօս անձինք.

Ուռիներով տնկած մի հին պարտէզ, խորքում մի տուն, որի ներքին յարկի երեք լուսամուտները լուսաւորուած են: Ներսում բաւական որոշ կերպով լամպի լոյսի տակ նկատուում է մի ընտանիք: Հայրը նրստած է օջաղի առաջ. մայրը յենուած է սեղանին՝ անորոշ հայեացքը հենուեն ուղղած: Սպիտակ շորերով երկու ջահիլ աղջիկներ ասեղնազործում են եւ երազում՝ ժպտալով սենեակի խաղաղութեան մէջ: Արանցից մէկն ու մէկը եծէ վեր կենայ քայլի կամ մի ժեստ անի, թուում է թէ այդ շագճումները լինելու են խորհրդաւոր, հաղուաղէպ, մի տեսակ տարածութեան մէջ եթերացած, լոյսի եւ լուսամուտների թափանցիկ վարազոյրների պատճառով: Ծերունին եւ օտարականը նախազուշուծիւններով մտնում են պարտէզ:

ԾԵՐՈՒՆԻՆ. Այժմ մենք պարտիզի այն մասումն ենք, որ տարածուում է սառն յետեր: Նրանք այստեղ երբէք չեն գալիս: Դռները հակառակ կողմից են և փակուած իսկ լուսամուտների տախտակէ փեղկերը ծածկուած են: Բայց այստեղ լու-

ասմուտները տախտակէ փեղկ չ'ունին, և ես լոյս եմ տեսնում... Այս, նրանք զևս նստած ետ լամպի առաջ: Լաւ է, որ մեր ոսնածայնք չը լսեցին, մայրը կամ աղջիկները դուրս կըզայնը դուռէ, և այն ժամանակ ինչ պէտք է անէինք...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Ի՞նչ պէտք է անենք:

ԾԵՐՈՒՆԻՆ. Նախ ես կը կամենայի տեսնել, թէ արդեօք նրանք բոլորն էլ զանխճումն են, այն, ևս տեսնում եմ հօրը նստած կրակի առաջ և ձեռները ծնկներին... մայրը արմունկով յենուած է սեղանին. նա մեզ է նայում:

ԾԵՐՈՒՆԻՆ. Ո՛չ, նա ինքն էլ չը գիտէ, թէ ինչ քանի է նայում և չէ կարող մեզ տեսնել, որովհետև մենք մեծ ծառերի ստուերում ենք: Բայց շատ մի մօտենաք... Մեռածի երկու քոյրերը նոյնպէս սենեակումն են: Նրանք ասեղնազործում են զանդադութեամբ, իսկ փոքրիկ երեխան նիրհում է: Ժամի ինն է պատի ժամացոյցով... նրանք ոչինչ չը գիտեն և չեն էլ խօսում:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Եթէ կարելի լինէր հօր ուշադրութիւնը դրանք և նրան մի քանի նշան անել: Նա զլուխը սեր կողմը զարձրեց: Ձէք կամենայ արդեօք, որ ես ձեռնեմ լուսամուտներից մէկը. վերջապէս պէտք է, որ նրանցից մէկն ու մէկը միւսներից աւելի վաղ իմանայ...

ԾԵՐՈՒՆԻՆ. Ես չը գիտեմ որին բնորել... պէտք է մեծ զգուշութիւններ ձեռք առնել... հայրը ծեր է և հիւանդատ... մայրը նոյնպէս. քոյրերը շատ ջանիլ են... և ամենքը նրան այնպէս էին սիրում, ինչպէս էլ ոչ սք չի կարող սիրել: Այս տնից աւելի երջանիկ տուն ևս երբէք չէի տեսել: Ո՛չ, ո՛չ, մի մօտենաք լուսամուտին. սա ամենից աւելի ծանր կը լինէր... աւելի լաւ է յայտնել ամենապարզ ձևով, որպէս թէ սա լինէր մի սովորական երեոյթ, պէտք չէ տխուր երեւոյթ, թէ չէ նրանց ցաւը ձերից կ'անցնի և էլ չափ չի ունենայ... գնանք պարտիզի միւս կողմը: Մենք կը ձեռննք դուռը և ներս կը մտնենք այնպէս, որ ասես ոչինչ պատահած չը լինէր. նախ ես կը մտնեմ, նրանք չեն զարմանայ, որովհետև երբեմն երեկոները ես ծաղիկներ և պտուղներ եմ բերում և անց եմ կացնում նրանց հետ մի քանի ժամ:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Ի՞նչ հարկապար է որ ես ձեզ ուղեկցեմ: Գնացէք մենակ. ես կը սպասեմ, մինչև ինձ կանչեն... նրանք ինձ երբէք չեն տեսել... Ես մի անցորդ եմ, մի օտարական...

ԾԵՐՈՒՆԻՆ. Լաւ չէ մենակ լինել: Մի քանի հողով բերած դժբաղդութիւնը աւելի նուազ վճռական և նուազ ծանր է... Ես այդ մատին մտածում էի ճանապարհին... Եթէ ես մենակ մըտնեմ, պէտք է հէնց սկզբից խօսեմ. նրանք բոլորը կ'իմանան մի քանի խօսքից և ես ասելու էլ ոչինչ չեմ ունենալ, իսկ ես վա-

խենում եմ այն լուսթիւնից, որ հետևում է զժբաղդութիւնը գուժող խօսքերին... Այդ այն ժամն է, երբ սիրար կտոր կտոր է լինում... Եթէ մենք միասին մտնենք, և ես՝ օրինակ երկար դէս ու դէն ձգելուց յետոյ ասեմ՝ նրան գտել են այսպէս... Նա ծփծփում էր դեռի վրայ և ձեռներն իրար էին փակուած...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Չեռներն իրար փակուած չէին, թեևրը կախուած էին մարմնի երկարութեամբ:

ԾԵՐՈՒՆԻՆ. Դուք տեսնում էք, մարդ հակառակ իր կամքի խօսում է... Եւ զժբաղդութիւնը կորչում է մանրամասնութիւնների մէջ... այլապէս եթէ ես մենակ մտնեմ, հէկց առաջին խօսքերը, ինչքան ես նրանց ճանաչում եմ, սոսկալի կը լինեն, և Աստուած դիտէ, թէ ինչ կը պատահի... Բայց եթէ մենք փոխ առ փոխ խօսենք, նրանք մեզ կը լսեն և չեն էլ մտածի դոյժի մասին... Մի մոռանաք, որ մայրն էլ այնտեղ է և նրա կեանքը մագից է կախուած... Լաւ կը լինի, որ առաջին աղիքները փշրուեն մի քանի անօգուտ խօսքերի վրայ... Մի փոքր խօսակցութիւն է հարկաւոր զժբաղդների շուրջը, պէտք է որ նրանք շրջապատուած լինեն: Ամենամատարբերներն անգամ առանց իմանալու կրում են ցաւի մի մասը, որ այսպիսով բաժանուած է առանց ազմուկի, առանց դժուարութեան, ինչպէս օդը կամ լոյսը:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Չեր թրջուած զգեստից շուրը կախկիթում է սալայատակի վրայ:

ԾԵՐՈՒՆԻՆ. Միմիայն իմ վերարկուի վարի մասն է թրջուած. դուք կարծես թէ մրսում էք: Չեր կուրծքը ցիխտուած է... Ճանապարհին, ես այդ չեմ նկատել մթութեան պատճառով:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Ես շուրը մտայ մինչև գօտիս:

ԾԵՐՈՒՆԻՆ. Երբ ես հասայ, դուք վաղուց էիք արդէն զրտել նրան:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Հազիւ մի քանի վայրկեան առաջ. արդէն օրը տարածամ էր և դետափը խաւար: Ես քայլում էի աչքերս յառած դեռին, որ աւելի պայծառ էր, քան ճանապարհը, երբ տեսայ մի տարօրինակ բան հղէգների մի խմբից երկու քայլ հեռու... Մօտենում եմ և տեսնում նրա երկայն վարսերը, որոնք զլիւի վրայ բարձրացած համարեա աղեղնաձև, պտոյտպտոյտ էին անում հոսանքի հետ...

(Սենեակում երկու աղջիկները զլիները դարձնում են դէպի լուսամուտը):

ԾԵՐՈՒՆԻՆ. Տեսաք ինչպէս նրա քուրերի ուսերի վրայ երկրացին վարսերը:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Նրանք զլուխները դէպի մեզ դարձրին...

Նրանք հէնց այնպէս զրուինները դարձրին: Գուցէ եւ շատ բարձրը խօսեցի: (Երկու աղջիկները ընդունում են իրանց առաջուայ դիրքը): Ահա, այժմ էլ չեն նայում... Եւ մտայ ջուրը մինչև դօսիս և կարողացայ բռնել ձեռքից և առանց գժուարութեան հանեցի փփր... Եւ նոյնպէս գեղեցիկ էր ինչպէս իր քոյրերը...

ԾԵՐՈՒՆԻՆ. Եւ թերևս աւելի գեղեցիկ լինէր... Չը դիտեմ ինչու եւ բոլոր արիւթիւնս կորցրի...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Ո՞ր արիւթիւնից էք խօսում դուք: Մենք արինք բոլորը, ինչ մարդ կարող էր անել... Մի ժամից աւելի էր, ինչ նա մեռած էր...

ԾԵՐՈՒՆԻՆ. Եւ դեռ այս առաւօտ կենդանի էր... Եւ նրբան հանդիպեցի երբ և կեղեցուց դուքս էր դալիս... Ինձ ասաց, թէ գնում է տեսնելու իր մեծ տաաին գետի միւս կողմում, այն գետի, որի մէջ դուք գտաք նրան... Չը դիտէր, թէ եւ երբ կը տեսնեմ իրան... Կարծես թէ մի բան էր ուղում իննգրել ինձանից, բայց չը համարձակուեց և հեռացաւ յանկարծակի. այդ մասին եւ այժմ եմ մտածում... Եւ եւ ոչինչ չը նկատեցի... Եւ ժպտաց ինձ այնպէս, ինչպէս ժպտում են նրանք, որոնք կամենում են լուր և կամ որոնք վախենում են, որ չը լինի թէ իրանց հասկանան... Թւում էր թէ նա դժուարութեամբ է լոյս տա՞ծում... Աչքերը պարզ չէին և համարեա ինձ չը նայեց...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Գիւղացիներն ինձ ասացին, թէ տեսել են նրան թափառելիս արեւելին մինչև երեկոյ... Նրանք կարծել են, թէ աղջիկը ծաղիկներ է հաւաքում... Կարող է պատահել, որ իր մահը...

ԾԵՐՈՒՆԻՆ. Ո՞վ գիտէ... Եւ առհասարակ մարդս ինչ գիտէ... Եւ դուցէ այնպիսիներից էր, որոնք չեն կամենում ոչինչ ասել. իւրաքանչիւր ոք ապրել չը ցանկանալու շատ հիմունքներ ունի... Մարդու հոգին այնպէս պարզ չէ երևում, ինչպէս ահա սենեակը: Բոլոր հոգիներն այսպէս են... Նրանք ասում են միմիայն ամենատուրական բաներ և մարդ ոչինչ չի հասկանում... Ամիսներով ապրում եւ մէկի կողքին, որ էլ այս աշխարհից չէ, և որի հոգին էլ չի կարողանում խոնարհուել. նրան պատասխանում եւ առանց այն մասին մտածելու, և ահա տեսէք, թէ վերջն ինչ է պատահում... Նրանք անյոյզ են, որպէս արկնիկներ, և սակայն այնքան անցքեր են կատարում իրանց հոգիներում... Իրանց ինչ լինելը իրանք էլ չը գիտեն... Այս աղջիկը կարող էր ապրել, ինչպէս ապրում են ուրիշները. մինչև իր մահը նա կարող էր ասել՝ «Պարոն, Տիկին, այս առաւօտ անձրև կը գայ» կամ՝ «Մենք չուտով կը նախաճաշենք, տասն երեք հոգի կը լինինք, սեղանին» կամ՝ պտուղները տակաւին

հասած չենա: Ընկած ծաղիկներին մասին նրանք խօսում են ժպտալով, բայց արտասուում են մթութեան մէջ... Մինչև իսկ մի հրեշտակ չի կարող տեսնել այն՝ ինչ պէտք է տեսնել, և մարդ բանը գլխի է ընկնում դժբաղդութիւնից յետոյ... Երեկ երեկոյ նա այստեղ էր՝ լամպի առաջ, ինչպէս իր քոյրերը, բայց դուք չէիք կարող սրանց տեսնել այնպէս, ինչպէս պէտք է տեսնել, եթէ այս բանը պատահած չը լինէր... Ինձ թւում է, թէ ես սրանց առաջին անգամն եմ տեսնում... Սովորական կեանքը հասկանալ կարողանալուց առաջ հարկաւոր է նրա վրայ մի բան աւելացնել... Նրանք ձեզ մօտ են, ձեր աչքի առաջ, և դուք նրանց կարողանում էք նկատել միայն այն ժամանակ, երբ մեկնում են յաւիտեան... Եւ սակայն որքան փոքրիկ է կղել նրա հողինյ խեղճ, միամիտ և անսպառ փոքրիկ հողին, որ ունէր իմ գաւաղը, եթէ նա ասել է, ինչ որ ասած պիտի լինէր, եթէ արել է, ինչ պէտք է որ արած լինէր...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Այժմ նրանք ժպտում են սենեակի լուսութեան մէջ:

ԾԵՐՈՒՆԻՆ. Ու հանգիստ են... Այս երեկոյ նրան չէին սպասում...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Նրանք ժպտում են առանց չարժուելու...

Բայց անա հայրը մի մատը դրեց չրթուքին...

ԾԵՐՈՒՆԻՆ. Նա մատով ցոյց է տալիս մօր կրծքին ննջած երեխային:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Մայրը չի համարձակուում աչքերը բարձրացնել, վախենալով խոռվել մանկան քունը:

ԾԵՐՈՒՆԻՆ. Աղջիկները էլ չեն աշխատում... Տիրում է խորին լուսթիւն:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Նրանց մետաքսէ թելի կծիկը վար ընկաւ...

ԾԵՐՈՒՆԻՆ. Ամենքը նայում են երեխային:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Նրանք չը դիտեն, որ ուրիշներն էլ նրանց են նայում...

ԾԵՐՈՒՆԻՆ. Մեզ էլ են նայում...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Նրանք աչքները բարձրացրին...

ԾԵՐՈՒՆԻՆ. Բայց ոչինչ չեն տեսնի:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Ի՞նչ երջանիկ են... չը դիտեն թէ ինչ է պատահել...

ԾԵՐՈՒՆԻՆ. Իրանք իրանց լուս պատսպարուած են կարծում... Փակեցին դռները, լուսամուտներն էլ երկաթէ վանդակ ունեն, պնդացրել են հին տան պատերը և կաշնի փայտէ երեք դռների վրա հաստատել սողնակներ... Նրանք նախատեսել են բոլորը, ինչ կարելի է նախատեսել...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Վերջ իրերջոյ պէտք է բանը յայտնել, թէ չէ մի ուրիշը կարող է գալ և յանկարծակի ասել... Գիւղացիներն մի ամբոյս կար այն մարդագետնուն, ուր գտնուում է մեռելը... Եթէ նրանցից մէկը գուռը ձեռքի...

ԾԵՐՈՒՆԻՆ. Մարթան և Մարիամը փոքրիկ մեռելի մօտ են: Գիւղացիները ձիւղերից մի պատգարակ պատրաստելու գընացին, և ես պատուիրեցի մեծ աղջկաս շտապով գալ մեզ յայտնել, հէնց որ նրանք ճանապարհ կ'ընկնեն: Սպասենք մինչև նրա գալը. նա ինձ կ'ընկերանայ... Մենք չէինք կարող սրանց այսպէս նայել... Ես սկզբում կարծում էի, որ միայն պէտք է գուռը ձեռքը, պարզապէս մտնել, մի քանի խօսք գտնել և ասել... Բայց ես նրանց կեանքը լամպի առաջ խիստ երկար տեսայ...

(Ներս է մտնում Մարիամը):

ՄԱՐԻԱՄ. Գալիս ես, պապիկ:

ԾԵՐՈՒՆԻՆ. Այդ դ՞ու ես. նրանք ձրտեղ են:

ՄԱՐԻԱՄ. Նրանք վերջին բլուրների ստորոտումն են:

ԾԵՐՈՒՆԻՆ. Լուռթեամբ կը գան:

ՄԱՐԻԱՄ. Ես ասացի, որ ցածր ձայնով աղօթեն: Մարթան նրանց ուղեկցում է...

ԾԵՐՈՒՆԻՆ Շատ են:

ՄԱՐԻԱՄ. Բոլոր գիւղը բերողների շուրջն է թափուել. ճրագներ էլ էին բերել: Ասացի, որ մարեն...

ԾԵՐՈՒՆԻՆ. Ո՞ր ճանապարհով են գալիս:

ՄԱՐԻԱՄ. Նրանք գալիս են փոքրիկ շաւիղներով և յամբարայլ:

ԾԵՐՈՒՆԻՆ. Ժամանակ է...

ՄԱՐԻԱՄ. Դուք յայտնել էք, պապիկ:

ԾԵՐՈՒՆԻՆ. Տեսնում էք, որ ոչինչ չենք ասել... Նրանք դեռ նստած են լամպի առաջ... Նայեցէք, դառակս, նայեցէք, դուք մի բան կը տեսնէք կեանքից...

ՄԱՐԻԱՄ. Օ, Ի՞նչ խաղաղ են... Կարծես թէ ես իրանց երազով եմ տեսնում...

ՕՏԱՐԱԿԱՆ. Զգուշացէք, ես տեսնում եմ, որ երկու քոյրերը ցնցուեցին...

ԾԵՐՈՒՆԻՆ. Նրանք վեր կացան...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Կարծեմ գալիս են դէպի լուսամուտը...

(Երկու քոյրերից մէկը այս վայրկենին մօտենում է առաջին լուսամուտին, միւսը՝ երրորդին եւ յենելով ձեռները ապակու վրայ՝ երկար նայում են խաւարին):

ԾԵՐՈՒՆԻՆ. Ոչ որ չէ գալիս դէպի միջին լուսամուտը...

ՄԱՐԻԱՄ. Նրանք նայում են... Նրանք ականջ են դնում...

ԾԵՐՈՒՆԻՆ. Մեծ աղջիկը ժպտում է մի բանի, որ ինքն էլ չէ տեսնում...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Իսկ երկրորդի աչքերը լի են երկիւղով:

ԾԵՐՈՒՆԻՆ. Զգուշացէք, որովհետեւ ով գիտէ թէ հոգին մինչև ուր է տարածւում մարդկանց շուրջը...

(Երկար լուռութիւն: Մարիամը կայտւում է ծերունու կրծքին եւ համբուրում է նրան):

ՄԱՐԻԱՄ. Պապիկ...

ԾԵՐՈՒՆԻՆ. Լաց մի լինիք, գաւաղս... Մեր հերթն էլ կը գայ...

(Լուռութիւն):

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Նրանք երկար են նայում:

ԾԵՐՈՒՆԻՆ. Խեղճեր... Նրանք կարող են նայել հարիւր հազար տարի և դարձեալ ոչինչ չեն տեսնի, զիշերը շատ խաւար է... Նրանք նայում են այս կողմը, և հէնց այստեղից է գալիս զժբաղդութիւնը...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Լաւ որ նրանք մեր կողմն են նայում... բայց այս ինչ է առաջանում մարդագետնի կողմից:

ՄԱՐԻԱՄ. Կարծեմ ամբողջն է գալիս... Այնքան հեռու են, որ մարդ հազիւ է ջոկում...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Շաղի անհարթութիւնների վրայ նրանք շարժւում են ալիքաձև... Ահա կրկին յայտնուեցին լուսնի շողերով ողողւած լեռնալանջին...

ՄԱՐԻԱՄ. Օ՛, ինչ շատ են... Քաղաքի արուարձաններից մարդիկ վաղէ վաղ հասնում էին, երբ ես եկայ... Ահա նրանք մի մեծ պոսոյա են անում:

ԾԵՐՈՒՆԻՆ. Ինչ և լինի, կը գան, ահա ես էլ եմ տեսնում... Նրանք քայլում են մարդանկախների վրայ և այնպէս փոքր են թւում, որ մարդ հազիւ է ջոկում խոտերի մէջ... Կասեա լուսնի շողերի տակ խաղացող երեխաներ լինեն, այս աղջիկները թէ տեսնեն էլ նրանց, դարձեալ բան չեն հասկանայ... Եւ ինչքան ուզում են թող երեաները դարձնեն, նրանք այնուամենայնիւ մօտենում են քայլ առ քայլ. ահա երկու ժամ է որ զժբաղդութիւնն աճում է և նրանք անկարող են այն արգելիւ: Դժբաղտութիւնը բերողներն էլ նրա ընթացքը կանգնեցնել չեն կարող, նա տէր է, որին նրանք էլ պարտական են ծառայել... Դժբաղդութիւնն իր նպատակն ունի և գնում է իր ճանապարհով... նա անխոնջ է և միայն մի հատիկ իջէալ ունի... Պէտք է նրանք իրանց ոչժերը տան նրան: Տխուր են, բայց գալիս են... Խըղձում են, բայց և այնպէս պէտք է առաջ ընթանան...

ՄԱՐԻԱՄ. Մեծ աղջիկն էլ չի ժպտում, պապիկ...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Նրանք հեռանում են լուսամուտներից...

ՄԱՐԻԱՄ. Ահա համբուրում են իրանց մօրը...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Մեծ աղջիկը շոյում է երեխայի խոսքու-
ները, իսկ երեխան չի զարթնում...

ՄԱՐԻԱՄ. Օ՛, հայրը ցանկանում է, որ իրան էլ համբու-
րեն...

ՕՏԱՐԱԿԱՆ. Այժմ լուռ թիւն տիրեց ..

ՄԱՐԻԱՄ. Աղջիկները յետ եկան իրանց մօր մօտ...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Եւ հայրը նայում է պատի ժամացոյցի մեծ
ճօճանակին...

ՄԱՐԻԱՄ. Եւ կարծես թէ ազօթում են առանց հասկանա-
լու իրանց արածը:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Կարծես ականջ են զնում իրանց հոգու
ձայնին...

(Լուռ թիւն):

ՄԱՐԻԱՄ. Պապիկ, նրանց մի լայտնեցէք այսօր...

ԾԵՐՈՒՆԵՆ. Տեսնում էք, դուք էլ էք կորցնում ձեր
արիւթիւնը... Ես լաւ գիտէի, որ պէտք էր նայել: Ես մօտ
ուլթառն երեք տարեկան եմ, և այս առաջին անգամն է, որ
կեանքի պատկերն ինձ ապշեցնում է: Չը գիտեմ թէ ինչու բո-
լորն ինչ նրանք անում են, ինձ թւում է այնպէս տարօրինակ,
այնպէս խորհրդաւոր՝ նրանք պարզապէս նստած են և լամպի
առաջ սպասում են, որ գիշերը հասնի, ինչպէս որ մենք կ'ըս-
պասէինք մեր լամպի առաջ. և սակայն ինձ թւում է, թէ ես
նրանց տեսնում եմ մի ուրիշ աշխարհի բարձրութիւնից,
որովհետեւ գիտեմ մի ճշմարտութիւն, որ նրանք զեռ չը գիտեն...
Ա՛յս է պատճառն արդեօք, դաւակներս. առաջէք ինձ, դուք ին-
չու էք դուռնատ. կայ միթէ մի ուրիշ բան որ մարդ անկարող է
ասել, և որ մեզ լացացնում է: Ես մինչև այժմ չը գիտէի, թէ
կեանքի մէջ կայ այնպիսի մի տխուր բան, որ վախեցնում է գի-
տողներին... Եթէ ոչինչ էլ պատահած չը լինէր, ես կը վախե-
նայի սրանց տեսնել այսպէս հանդիստ... Նրանք շատ մեծ հա-
ւատ ունեն այս աշխարհի վրայ... նրանք այնտեղ են, թշնա-
մուց բաժանուած այս ողորմելի լուսամուտներով... Կարծում
են, թէ ոչինչ չի պատահի, որովհետեւ փակել են դուռը,
բայց չը գիտեն, որ այնուամենայնիւ հոգիներին միշտ մի բան հաս-
նում է, և որ աշխարհը չի վերջանում տների զոների առաջ...
Նրանք այնպէս ապահով են իրանց փոքրիկ կեանքի համար, և
չեն էլ կասկածում, թէ այնքան ուրիշներ այդ կեանքի մասին
աւելին գիտեն, և որ ես ողորմելի ձերուկս, երկու քայլ նրանց
դռնից հեռու, պահում եմ նրանց ամբողջ փոքրիկ բաղրաւորու-

թիւնը իմ պառաւ ձեռների մէջ, որ ես չեմ համարձակուում բացել...

ՄԱՐԻԱՄ. Գթացէք, պապիկ...

ԾԵՐՈՒՆԻՆ. Մենք խղճում ենք նրանց, զաւակս, բայց մեզ չեն խղճում...

ՄԱՐԻԱՄ. Վաղը յայտնեցէք, պապիկ, երբ որ լոյս կը լինի, և նրանք այնպէս տխուր չեն լինի...

ԾԵՐՈՒՆԻՆ. Դուք դուցէ իրաւունք ունիք... Ասելի լաւ կը լինէր այս ամենը թողնել զիչերուայ մէջ: Եւ լոյսն էլ մեղմացնում է դաւը... Բայց ինչ կ'ասեն մեզ նրանք վաղը: Դրժբազդոթիւնը սովորաբար դարձնում է նախանձոտ. բազդի հարուածին ենթարկուողները ուզում են տեղեակ լինել օտարներից առաջ: Նրանք չեն սիրում մնալ անորոշութեան ձեռների մէջ... Մենք այդ գէպքում կը նմանէինք մի բան զողացող մարդկանց...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Ասենք ժամանակ էլ չը կայ. ես լսում եմ արդէն աղօթողների մամուսք...

ՄԱՐԻԱՄ. Նրանք այնտեղ են... ահա անցնում են կանաչէ ցանկապատի յետեից:

(Ներս է մտնում Մարթան):

ՄԱՐԹԱ. Ահա և ես: Ես նրանց առաջնորդեցի մինչև այստեղ և ասացի, որ սպասեն ձանապարհի վրայ: (Լսում են երեխաների աղաղակներ) Ահ, երեխաները զեռ աղաղակում են... ևս նրանց արգելել էի գալ... բայց այդ փոքրիկներն էլ են կամենում տեսնել, իսկ մայրերը նրանց ցանկութիւնը չեն ուզում կատարել... Կ'երթամ սաստելու. բայց ոչ, ահա նրանք լռեցին. —ամեն ինչ պատրաստ է: Ես բերել եմ այն փոքրիկ մատանին, որ գանուկն նրա վրայ... Ես ինքս մեռելին պակեցրի պատգաբակի վրայ, նա կարծես քնած է... Լաւ չարչարեցի, մազերը չէին կամենում հնազանդուել. քաղել տուի եզնակներ... ցաւալի է, բայց ուրիշ ծաղիկ չը կար... Ի՞նչ էք անում դուք այստեղ: Ինչո՞ւ նրանց մօտ չէք... (Նա նայում է լուսամուտներին) Չեն լալիս արդեօք... նրանք... դուք չէք յայտնել:

ԾԵՐՈՒՆԻՆ. Մարթա, Մարթա, քո հոգու մէջ չառ կեանք կայ, դու չես կարող հասկանալ...

ՄԱՐԹԱ. Ինչո՞ւ չը պէտք է հասկանամ... (Մի քիչ լուծիւծիւծից յետոյ եւ յանդիմանական եղանակով) Դուք չէք կարող այդ անել, պապիկ...

ԾԵՐՈՒՆԻՆ. Մարթա, դու չը գիտես...

ՄԱՐԹԱ. Ես ինքս կ'երթամ կը յայտնեմ:

ԾԵՐՈՒՆԻՆ. Մնա այստեղ, զաւակս և նայիր մի վայրկեան:

ՄԱՐԹԱ. Օ՛ր, ինչ դժբաղդ են նրանք... էլ չեն կարող սպասել:
ԾԵՐՈՒՆԻՆ. Ինչո՞ւ:

ՄԱՐԹԱ. Ձը գիտեմ... բայց դա այլ ևս անկարելի է:
ԾԵՐՈՒՆԻՆ. Այստեղ արի, գաւակա...

ՄԱՐԹԱ. Որպիսի համբերութիւն ունեն նրանք:
ԾԵՐՈՒՆԻՆ. Այստեղ արի, գաւակա...

ՄԱՐԹԱ. (Գտնալով) Ո՛ւր էք, պապիկ. ևս այնպէս դժբաղդ
եմ, որ էլ ձեզ չեմ տեսնում... Ես ինքս էլ չը գիտեմ ինչ անել...
ԾԵՐՈՒՆԻՆ. Էլ մի նայիր նրանց, մինչև որ իմանան բո-
լորը...

ՄԱՐԹԱ. Ես ուզում եմ ձեզ հետ գնալ այնտեղ:

ԾԵՐՈՒՆԻՆ. Ո՛չ, Մարթա, մնա այստեղ... նստիր քրոջ
կողքին, այս քարէ հին նստարանի վրայ տան պատի սակ և մի
նայիր... Դու շատ ջանիլ ես և էլ չես կարող մոռանալ... Դու
չես կարող իմանալ, թէ ինչ է մի դէմք այն վայրկեանին, երբ
մահը գալիս է անցնելու նրա աչքերով... Գուցէ ազաղակներ
լսուեն... Ձը դառնաս նայելու... Գուցէ և ոչինչ չի լինի... Մա-
նաւանդ յետ մի նայիր, եթէ դու ոչինչ չը լեսա... Մարդ կան-
խաւ չի կարող իմանալ ցաւի ընթացքը... սովորաբար մի քանի
խոր հեծկլտանքներ, և ահա բոլորը... Ես ինքս էլ չը գիտեմ թէ
ինչ կ'անեմ, երբ այդ հեկեկանքները լսեմ... Այս կեանքից դուրս
է այդ բանը... Գնալուցս առաջ համբուրիր ինձ, գաւակա...

(Աղօթքի մոմոցը աստիճանաբար մօտենում է. ամբոխի մի մասը
ձափւում է պարտէզ. լսում են վաղողների խուլ ոտնաձայներ և ցած
ձայնով խօսակցութիւն:)

ՕՏԱՐԱԿԱՆԸ. (ամբոխին) Մնացէք այստեղ... Մի մօտենաք
լուսամուտներին... Ո՛ւր է նա:

ՄԻ ԳԻՒՂԱՑԻ. Ո՞վ:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Միւսները... բերողները...

ԳԻՒՂԱՑԻ. Նրանք գալիս են այն ծառուղիով, որ տանում
է դէպի դուռը: (Ծերունին հեռանում է. Մարթան և Մարիամը նստած
են նստարանի վրայ, մէջքները դէպի լուսամուտները: Ամբոխի մէջ փոք-
րիկ շշուէջ:)

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Լուսթիւն: Մի խօսէք: (Քոյրերից մեծը վեր է
կենում և գնում է քաշիլու դրան սողնակը):

ՄԱՐԹԱ. Նա բաց է անում:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Ընդհակառակը. փակում է: (լուռութիւն)

ՄԱՐԹԱ. Պապս չը մտնու:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Ո՛չ... Աղջիկը յետ եկաւ նստելու մօր կող-
քին... միւսները չեն չարժւում, իսկ երեխան շարունակում է
քնել: (Լուռութիւն):

ՄԱՐԹԱ. Քոյրիկ, տուր ինձ քո ձեռքը:

ՄԱՐԻԱՄ. Մարթնա (Նրանք փաթաթուում են եւ համարուում)

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Նա երեւի դուռը ձեռեց... Բոլորը միաժա-
մանակ գլուխները բարձրացրին... և նայում են իրար...

ՄԱՐԹԱ. Օ՛, օ, իմ խեղճ քոյրիկ... Ես էլ կ'աղաղակեմ...

(Նա խեղդում է իր հեծկլտանքները քրոջ ուսի վրայ)

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Երեւի նա նորից ձեռեց դուռը... հայրը նա-
յում է ժամը. նա վերկացաւ:

ՄԱՐԹԱ. Քոյրիկ, քոյրիկ, ես էլ եմ ուզում ներս մտնել...

Նրանք էլ չեն կարող մենակ մնալ...

ՄԱՐԻԱՄ. Մարթնա, Մարթնա (նա նրան պահում է):

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Հայրը դրան մօտ է... նա քաշում է սող-
նակը... նա բաց է անում զգուշութեամբ...

ՄԱՐԹԱ. Օ, դուք չէք տեսնում...

ՕՏԱՐԱԿԱՆ. Ի՞նչը:

ՄԱՐԹԱ. Նրանց, որոնք բերում են...

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Նա հագիւ մի փոքր բաց է անում դուռը...
Ես տեսնում եմ կանաչ հարթալայրի միայն մի անկիւնը և շա-
տրրուանը... Նա դուռը ձեռքից չի թողնում... նա յետ յետ
է քաշում... նա կարծես ասում է՝ «ան, այս գուք էք...» Նա
բարձրացնում է բազուկները... և փակում է դուռը խնամքով...
Ձեր պապը ներս մտաւ...

(Ամբոխը մտնում է լուսամուտներին. Մարթնա եւ Մարիամը նախ
բարձրանում են կիսով չափ, ապա նոյնպէս մտնում են պինդ փաթա-
թուած իրար: Երեւում է ինչպէս ծերունին առաջանում է դահլիճում: Մե-
ռելի երկու քոյրերը վեր են կենում. մայրը երեսային խնամքով բաղկա-
ծուի մէջ նստեցնելուց յետոյ նոյնպէս վեր է կենում, բաղկաթողը սեն-
եակի կենտրոնումն է այնպէս, որ դրսից երեւում է քնած փոքրիկը,
զուլեր մի փոքր ձեքուած: Մայրը գնում է ծերունուն ընդ առաջ եւ
նրան մեկնում է ձեռքը, բայց իսկոյն յետ է քաշում նախ քան ծերունին
կը կարողանար այն բռնել: Աղջիկներից մէկը կամենում է վերցնել այցե-
լուի վերարկուն, եւ միւսը նրան դէմ է անում մի բաղկաթող: Բայց ծե-
րունին անում է մերժողական մի փոքրիկ չէարժում: Հայրը ժպտում է
զարմացած դիրքով: Ծերունին նայում է դէպի լուսամուտները:)

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Նա չի համարձակուում ասել... Նա մեզ նայեց:
(Ամբոխի մէջ շշուկ):

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Լռեցէք...

(Ծերունին լուսամուտի դէմքերը տեսնելով շտապով աչքերը դարձնում
է. որովհետեւ աղջիկներից մէկը նրան շարունակ դէմ է անում նոյն բաղ-
կաթողը, նա վերջ ի վերջոյ նստում է եւ աջ ձեռքը մի բանի անգամ
սանեցնում է ձակատի վրայով):

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Նստեց...

(Գահլիճում գտնուող միւսանձինք նոյնպէս նստում են, մինչդեռ հայրը խօսում է ծերունու հետ հաճոյակատար եղանակով: Վերջապէս ծերունին բաց է անում բերանը, եւ իր ծայնի հնչունները ասես ուշադրութիւն են դրաւում: Բայց հայրը նրան ընդհատում է. ծերունին վերակտում է եւ փոքր առ փոքր միւսները անշարժանում են: Յանկարծ մայրը ցընցում է եւ վեր կենում:)

ՄԱՐԹԱ. Օ՜, մայրը հիմա կը հասկանայ...

(Մայրը դառնում է եւ ծածկում է երեսը ձեռներով. նոր շշուկ ամբոխի մէջ. իրար հրճում են: Երեխաները ճչում են, որ նրանց էլ բարձրացնեն տեսնելու համար: Մայրերի մեծամասնութիւնը հնազանդուում է:)

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Լռութիւն... նա դեռ չի յայտնել...

(Երեւում է ինչպէս մայրը յուզմունքով հարցեր է տալիս ծերունուն, վերջինս էլի մի քանի խօսքեր է ասում, յետոյ յանկարծ բոլոր միւսները վեր են կենում եւ կարծես հարցեր են տալիս, այն ժամանակ նա զլիով հաստատութեան մի լայն նշան է անում:)

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Ասաց... Նա ասաց բոլորը միանգամից:

ԱՄԲՈՒԻ ՄԷՋ ՄԻ ՉԱՅՆ. Յայտնեց, յայտնեց:

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Ոչինչ չի լուում:

(Ծերունին նոյնպէս վեր է կենում եւ առանց յետ դառնալու մատով ցոյց է տալիս յետեւի դուռը: Մայրը, հայրը եւ երկու աղջիկները նետում են դէպի այն դուռը, որ հայրը չի կարողանում իսկոյն բանալ: Ծերունին աշխատում է մօրն արգելել դուրս գալ:)

ՄԻ ՉԱՅՆ ԱՄԲՈՒԻ ՄԷՋ. Դուքս են գալիս, դուքս են գալիս...

(Իրարանցումն պարտիզում. ամենքը նետում են տան միւս կողմը եւ անյայտանում են բացի Օտարականից, որ մնում է լուսամուտների առաջ: Գահլիճում դրան երկու փեղկերը բացւում են վերջապէս, եւ բոլորը դուրս են թափւում միաժամանակ: Երեւում է աստղազարդ երկինքը, կանաչ հարթութիւնը եւ շատրուանը լուսնի լոյսի տակ, մինչդեռ սենեակի կենտրոնում մնացած երեխան շարունակում է հանդարտ քնել բազկաթոռի մէջ: Լռութիւն:)

ՕՏԱՐԱԿԱՆԸ. Երեխան չը գարթնեց:

(Նա էլ է դուրս գալիս:)

Թարգմ. ֆրանս. Ա. Ա.